
ԱՄԱՆՈՐ ԵՎ ՎԱՆԱՏՈՒՐ.
«ԱՄԵՆԱԲԵՐ ՆՈՐՈՑ ՊՏՂՈՑ ՏՕՆԸ»

ԹԱՄԱՐ ՀԱՅՐԱՊԵՏԱՆ

Հայ ժողովրդական բանահյուսության, մատենագրության և կրոնապատմական ավանդության մեջ պահպանվել են հիշողություններ, որոնք վերաբերում են հին Նոր տարվա Ամանոր աստվածությանը, նրան զուգակցված Վանատորին և համադրվում են փթթող բուսականության ու առաջնապտղի (նուբար) պաշտամունքին, որը տոնվում էր Նավասարդին¹:

Մատենագրական վկայությունները Նավասարդի մասին մի դեպքում վերաբերում են ամսանվանը (զնաւասարդաց ժամանակօքն), մեկ այլ դեպքում՝ տոնի անվանը (գտօնս նաւասարդաց)²:

Ազաթանգեղոսի հաղորդման համաձայն՝ Նավասարդը հին հայերի համար ամսանուն էր, Ամանորը՝ Նոր տարվա «ամենաբեր նորոց պտղոց տօն» նվիրված «Հիրրնկալ դիցն Վանատրի», որը կատարվում էր տարվա առաջին օրվա՝ Նավասարդի ուրախության առթիվ. «Եւ գլիշատակս վկայիցն բերելոց ժամադրեաց տօն մեծ հոշակել, յառաջագոյն կարծեալ սնտտեացն պաշտաման ի ժամանակի դիցն Ամանորայ ամենաբեր նորոց պտղոց տօնից հիրրնկալ դիցն Վանատրի, զոր յառաջագոյն իսկ ի նմին տեղոջ պաշտէին յուրախութեան Նաւասարդ աւուր»³:

Հովհան Մամիկոնյանի «Տարոնի պատմության» մեջ Նավասարդը նույնպես ամսանուն է: Ուշագրավ է, որ սուրբ Գրիգորը կարգադրում է սուրբ Կարապետի տոնը

¹ «Նավասարդը» պարսկերեն փոխառություն է, որ հայերեն նշանակել է՝ 1. հայկական տոմարի առաջին ամիսը, որով սկսվում էր տարին, 2. Ամանորի հանդես՝ տոնակատարություն, տոն, իսկ հաշվի առնելով նավա բառի կապը լուսնի, նորի հետ, նաև լուսնի տարի (տե՛ս Արդի հայերենի բացատրական բառարան, հ. II, Երևան, 1976, էջ 1056, Ա. Օդաբաշյան. Ամանորը հայ ժողովրդական տոնացույցում.–Հայ ազգագրության և բանահյուսություն, հ. 9, Երևան, 1978, էջ 16):

² Փաւստոսի Բիւզանդացոյ պատմութիւն հայոց, թարգմ. և ծանոթ.՝ Ստ. Մայիսայանցի, Երևան, 1987, էջ 184:

³ Ազաթանգեղայ պատմութիւն, Ընտիր մատենագիրք, Թիֆլիս, 1882, էջ 482:

կատարել միշտ Նավասարդ ամսի 1-ին. «Եւ տաւն սրբոյ Կարապետին տայր կատարել, որ աւր մի էր Նաւասարդի»⁴:

Ազգային արեգակնային տոմարի առանձնահատկության համաձայն՝ Ամանորը թափառիկ⁵ էր, իսկ Նավասարդը, որոշակի ամսանուն չլինելով, կրում էր այն ամիսը, որի հետ համընկնում էր Ամանորը՝ Նոր տարին: Տոմարագետներից ոմանց կարծիքով՝ հայերը հնում այն տոնել են զարնանային օրահավասարին և հռոմեական մարտ ամսվան զուգակշիռ մարտ-Նավասարդը համարվել է տարեսկիզբ, ինչի հետ համախոս է նաև Ղ. Ալիշյանը⁶: Խոսելով տարբեր ազգերի մեջ ընդունված «ծաղիկների ու պտուղների տոն և ուրախություն կատարելու» մասին՝ նա Ամանորը համարում է իգական աստվածություն, որը եղել է Վանատրի կինը, ճիշտ այնպես, ինչպես հռոմեացիների Պոմոնա դիցուհին և նրա փեսան՝ Վերտումնուսը⁷, «որ էր պարտիզաց և պահիզաց պահապան, և կերպարան էր գեղեցիկ ծաղկապսակ երիտասարդ մի, պտուղներ և եղջիր առատութեան ի ձեռին. նոյնպես և Պոմոնա՝ գեղեցիկ յաւերժահարսն՝ որթով և ողկուզներով պսակեալ և նոյն առատութեան կամ ամենաբեր եղջիրն ի ձեռին: Եթէ չեմք կրրնար հաստատել՝ գոնէ կրնամք վայելուչ ըսել, որ Վանատուրն և Ամանորայ դիք այլ հարսն ու փեսայ ըլլան Հայոց այգեաց և պարտիզաց, և գուցէ միւս յունական կոոց հետ՝ ասոնց այլ պատկերքն գերուած բերուած այս տեղ»⁸, – եզրակացնում է Ղ. Ալիշյանը: Հավանաբար, նա նկատի ուներ Ազաթանգեղոսի հայտնի վկայությունը Հայոց գլխավոր դիցապաշտական կենտրոններից մեկում՝ Բագավանում, Ամանորի (հին նոր տարվա) տոնի օրերին Գրիգոր Լուսավորչի կողմից Հովհաննես Մկրտչի և Աթանագինեսի նշխարների մի մասն ամփոփելուն, նրանց հիշատակի առթիվ նոր տոն սահմանելուն և Բագավան եկած ուխտավորներին Ամանոր ու Վանատուր «դիքերի» կողմից հյուրընկալման ու օթևան տալու գործառույթներին՝ «Ձի ժողովեալ ի յիշատակ մեծի երանելւոյն Յովհաննու, և սուրբ վկային Աստուծոյ Աթանագինի, յայնմ աւուր իսբեցեն ի նմին յաւանի»⁹:

⁴ Յովհան Մամիկոնեան. Պատմութիւն Տարօնոյ, աշխատ. և առաջաբ. պ. գ. թ. Ա. Արրահամյանի, Երևան, 1941, էջ 106:

⁵ Հայկյան տոմարը շարժական էր, հիմնված 365 և 1/4 – օրյա արեգակնային տարվա վրա: 4 տարին մեկ անգամ Ամանորը մեկ օրով առաջ էր ընկնում, հաջորդաբար համընկնելով տարվա բոլոր օրերին, որոշ ժամանակից հետո վերադառնում էր իր նախկին տեղը: Այդ կետն էլ ապոկաստագն է: Ապոկաստագ-Տարին հայերն անվանում էին «Նահանջներու նահանջ», իսկ այդ ամբողջ ժամանակամիջոցը, որի մեջ թափառում էր Ամանորը, անվանում էին «Հայկյան շրջան» (Ա. Օդաբաշյան. նշվ. աշխ., էջ 20):

⁶ Ղ. Ալիշյան. Հին հուստոք կամ հեթանոսական կրօնք Հայոց, Վենետիկ, Ս. Ղազար, 1895, էջ 139:

⁷ Նույն տեղում, էջ 304:

⁸ Նույն տեղում:

⁹ Ազաթանգեղայ պատմութիւն, էջ 482:

Հունական Ջևս Քսենիոսն՝ օտարներին և պանդուխտներին հյուրընկալող իր հոգատար հատկանիշներով՝ ըստ Մր. Գրքի համապատասխանում է «Հիրասեր Որմզդական դիցն Վանատրի»¹⁰, այսինքն՝ Արամազդին, ում պաշտամունքային կրակը և զոհասեղանը գտնվում էր Բագավանում:

Հետագայում՝ տոմարական հաշվումների կանոնավորման արդյունքում, Ամանորի կրողն է դառնում օգոստոս-Նավասարդը, որը Նոր տարվա անվանումից վերածվում է տարվա առաջին ամսանվան՝ տարեսկիզբը գարնանային օրահավասարից (տնտեսական տարի) տեղափոխելով աշնանային օրահավասար (բերքահավաք), որոնց հետ էլ կապված են հին հայերի՝ Նոր տարվան՝ Ամանորին նվիրված տոնակատարությունները:

Հայոց մեջ ժողովրդական տարբեր տոներին բերքի օրհնության և նվիրաբերման ծեսեր էին կատարվում. գորօրինակ՝ Վարդավառին զոհաբերում էին խնձոր ու հասկեր, Համբարձմանը՝ կաթնով, Աստվածածնի տոնին՝ խաղող, Ամանորին, Տյառնընդառաջին, Մր. Սարգսին՝ հատիկներ (փոխինդ, աղանձ), որոնք արտահայտությունն են գտել նաև ժողովրդական բանահյուսության մեջ:

«Խիար-Խաթուն»¹¹ (Տուրուբերան-Մուշ), «Մարգարիտ շար»¹² (Վան-Վասպուրական), «Նառդան»¹³ (Մեղրի), «Դարչին և Իրեք Չարեք»¹⁴ (Բաղեշ), «Հեքիաթ Քիշմիշ Խաթունի ախչկան»¹⁵ (Տուրուբերան-Մուշ) հեքիաթներում իրենց արտացոլումն են գտել բուսակենդանական պաշտամունքի և, մասնավորապես, նավասարդյան բերքահավաքի ծիսական նվիրաբերման վերապրուկները, որոնք հետագայում միաձուլվել են Վարդավառի և Աստվածածնի տոներին:

«Խիար-Խաթուն» հեքիաթում «հալիվորը» խորհուրդներ է տալիս թագավորի որդուն, թե ինչպես գտնի Խիար Խաթունին և ամուսնանա նրա հետ: Տղան գնում է «բոստան» և ութ սովորական, մեկն էլ՝ լույս տվող վարունգ քաղում, որի մեջ Խիար Խաթունն է: Այն չպիտի ուտի, թե չէ վարունգը ծիտ կդառնա, կթոջի: Տղան ճամփին ծարավում է, ուտում վարունգները, իսկ Խիար-Խաթունի վարունգից մի հատ կծում, դնում է ծոցը: Ծոցում վարունգը ծիտ է դառնում, հետո՝ աղջիկ: Տղան «երկու կոճակ կ'հարցկա, խած մա ուշիկ կգարկա, շուտ կոճկներ կբիրա վրը իրար: Խիար-Խաթուն կէղնի ճնճուղ մա, կթովոկի տղի ծոցի մեջ: Տղի հ'ուշք կընցնի, կպատի գետին, ճնճուղ կէղնի հուրնիկ-հրեղեն ախչիկ մա, տղի ծոցեն կէլնի»¹⁶:

¹⁰ Աստուածաշունչ, Ս. Էջմիածին, 2010, Մակաբայեցիների երկրորդ գիրքը, 6:2, էջ 699:

¹¹ Հայ ժողովրդական հեքիաթներ (այսուհետև՝ ՀԺՀ), հ. XII, Երևան, 1984, էջ 101–105:

¹² ՀԺՀ, հ. XIV, Երևան, 1999, էջ 507–512:

¹³ ՀԺՀ, հ. VII, Երևան, 1979, էջ 606–617:

¹⁴ ՀԺՀ, հ. IX, Երևան, 1968, էջ 435–439:

¹⁵ ՀԺՀ, հ. XIII, Երևան, 1985, էջ 315–324:

¹⁶ ՀԺՀ, հ. XII, էջ 102:

Հետաքրքիր է նկատել, որ երգային բանահյուսության մեջ Սոնա յար աղջիկը նույն համեմատության մեջ է.

Ես մի կանաչ խիար եմ, Սոնայ եար,
Քու ջանին իխթիեար եմ, Սոնայ եար,
Երթաս-երթաս հետ կայնիս, Սոնայ եար,
Իմանաս բելլու եար եմ, Սոնայ եար¹⁷:

Ժողովրդական տարբեր տոներին զոհաբերվող պտուղների, մրգերի, բույսերի հետ միասին Աարնե-Թումփսոն-Ութերի (ATU) նշացանկի «Ժողովրդական հեքիաթների տիպերի» 408 թվահամարին համապատասխանող հայկական մի շարք հեքիաթներում խաղարկվում է Զատիկի տոնին զոհաբերվող ձուն: Ինը տարբերակ ունեցող հեքիաթախումբը [«Ենգիչարու հեքիաթը»¹⁸ (Այրարատ), «Ղուլ-գաղա և Նուռի-Գյոզալի»¹⁹ (Շիրակ), «Ծուվին ծառը»²⁰ (Արցախ), «Շարի մարգրիտ»²¹ (Տուրուբերան-Հարք), «Իրեք հավկիթ»²² (Տուրուբերան-Մուշ), «Սամել թագավորի տղաներ»²³ (Տուրուբերան-Մուշ), «Հալկիթին մեջեն ելած աղջիկը»²⁴, «Արնելոց թագավորի տղեն»²⁵ (Թիֆլիս), «Ոսկի ծամ»²⁶ (Թիֆլիս)] այդպես էլ կոչվում է՝ «Իրեք հավկիթ», որի համառոտ դիպաշարը հետևյալն է. նվիրագործյալ արքայազնը հոլով կամ քարով խաղալիս պատահաբար ջարդում է պառավի կուժը (փարչը, գավաթը), ինչն էլ պատճառ է դառնում, որ պառավի անեծքով այրվի Նուռի-Գյոզալի (այլ տարբերակներում՝ Ենգիչարու, Գյուլիզարի, Դև թագավորի աղջկա, Ոսկի ծամի) սիրուց: Տղան երեք ձու (այլ տարբերակներում՝ նուր²⁷, ձմերուկ²⁸) է գտնում, ջարդում, որոնց միջից փերիներ են դուրս գալիս. երկուսը մեռնում են ծարավից, երրորդը մնում է և դառնում նրա հարսնացուն:

¹⁷ Մ. Ի ս ա հ ա կ ե ա ն. Շիրակի ժողովրդական երգեր. – «Ազգագրական հանդես» (այսուհետ՝ ԱՀ), Դ գիրք, Թիֆլիս, 1898, էջ 164:

¹⁸ ՀԺՀ, հ. III, Երևան, 1962, էջ 310–315:

¹⁹ ՀԺՀ, հ. IV, Երևան, 1963, էջ 149–152:

²⁰ ՀԺՀ, հ. V, Երևան, 1966, էջ 157–162:

²¹ ՀԺՀ, հ. XI, Երևան, 1980, էջ 323–331:

²² ՀԺՀ, հ. XIII, էջ 178–182:

²³ Նույն տեղում, էջ 183–187:

²⁴ «Բիրական» (Կ. Պոլիս), 1899, էջ 231–232:

²⁵ Փշրանքներ ժողովրդական բանահիւսութիւնից, ժողովեց Գ. սարկավազ Հովսէփեանց, Թիֆլիս, 1892, էջ 85–90:

²⁶ Նույն տեղում, էջ 101–113:

²⁷ ՀԺՀ, հ. IV, էջ 149–152:

²⁸ ՀԺՀ, հ. XIV, էջ 507–512:

«Ենգիչարու հեքիաթում» պատավր տղային «ուշունց տվեց, ասելով – Ենգիչարու դարդով մեռնես:

Էրեխեն չհասկացավ, թե էն կնիկը դրանով ի՞նչ էր ուզում ասի: Քանի գնում, էս թաքավորի էրեխեն հալից ընկնում էր:

Հետո էկավ մի պատավ ու ասեց.– Ես կարամ լավացնի: Կէթաս, քաղաքից դուս մի ծառ կա, նրա տակին մի բուն ա շինած. բնի մեջ իրեք ձու կա: Մին-մին ձվաները կկոտրես ու ինչ որ կուզի՝ կտաս, չունքի նրանց մեջ փարիք կան. ջուր կուզի՝ տո՛ւր, հաց կուզի՝ տո՛ւր, թե չէ էն սհաթին կփախչի ձեռիցդ»²⁹:

«Ծուվին ծառը» հեքիաթում թագավորի թոռը կոտրում է Պատավի՛ կաթով լի գավաթը: Վերջինս անիծում է՝ ձվի ծառի տիրանաս: Տղան գնում է փնտրելու և ծերունու խորհրդով գտնում է ծառի վրա փայլող երեք ձվեր: Երկուսը կոտրում է, որոնց միջից դուրս եկած գեղեցկուհիները քաղցից ու ծարավից անմիջապես մեռնում են, իսկ երրորդին հասցնում է հաց ու ջուր տալ, ապրեցնել:

«Հակիթին մեջէն էլած աղջիկը» հեքիաթում նվիրագործված տղան կարողանում է փրկել միայն երրորդ աղջկան, ում դևի մայրը նետում է ջուրը: Անմիջապես ջուրը ծածկվում է անուշաբույր ծաղիկներով: Տղան փորձում է մխիթարվել այդ ծաղիկներից հավաքած ծաղկեփնջերով և երբ հիվանդանում է, նրան կազդուրում է միայն հավկիթից էլած աղջկա եփած կաթնապուրր, որի մեջ էլ գտնում է նրան նվիրած իր մատանին:

Հատկանշական է, որ այս հեքիաթներում ասկա են ջրերի ակունքներում, աղբյուրների մոտ կատարվող Վարդավառյան զոհաբերությունների՝ մատաղի հետքեր, քանի որ հավկիթներից էլած աղջիկները մահանում են՝ ջո՛ւր կանչելով: Ինչպես Վարդավառին, այնպես էլ Համբարձման տոնին ծաղկեփնջեր պատրաստելու և տոնի ընթացքում նաև ձվերի միջոցով խաղարկվող «Վիճակի» (ձվերից էլնող աղջիկների ճակատագիրը համեմատել Համբարձման տոնի այն դրվագի հետ, երբ աղջիկները մեկական ձու էին դնում տանիքին, որպեսզի հրեշտակները դրանց վրա իրենց բախտը գրեին): Ուշագրավ է տոնին զոհաբերվող կաթնապուրի շնորհիվ նվիրագործված տղան ոչ միայն առողջանում է, այլև՝ վերագտնում սրտով սիրածին, ինչին համախոս է նաև ժողովրդական խաղը.

Ա՛յ տղա հուր ես մուր ես,
Ես ծարավ եմ դու ջուր ես,
Մախմուրե՛ բանուած շոր ես,
Համբարձուայ գիշերն ո՞ւր ես³⁰:

²⁹ ՀԺՀ, հ. III, էջ 310:

³⁰ Մ. Բ ս ա հ ա կ ե ա ն. նշվ. աշխ., էջ 167:

Վան-Վասպուրականից գրաված «Մարգարիտ շար» հեքիաթում արքայազնն ամուսնությունից առաջ սև հավ է զոհաբերում այն գեղեցկուհուն գտնելու համար, ում նկարագրում է հետևյալ կերպ. «Քյանձ էսա խավու արյուն կարմիր, քյանձ էսա ձյուն սիվտակ, ծամերն էլ քյանձ իմ խանչալի կոթն սև քյաթայի պես աղջիկ որ կնդա՝ կառնեմ, թե չէ՝ ոչ կպսակվեմ և ոչ էլ աշխարհ կմտնեմ»³¹:

Արքայազնը պարտիզպանի խորհրդով իր որոնած անհրականին կարող է գտնել ձմերուկի մեջ և հասնել իր մուրազին, եթե ձմերուկները կտրի աղբյուրի մոտ: Մակայն, «Թագավորու լաճու սիրտը թրպըլթուն չի տա. հալա ջրի վերեն չհասած՝ ճամխի մեջ տեղ մի խատն կկտրի թե չէ՝ կտխնա որ մեյ խատ խուրն-խրեղեն աղջիկ տյուս կթոնի, «ճոտ ւր, ճոտ ւր, աման մեյ պուտ ճյուր» կասի, հալա խաբար մեջ բերնին, ջուրը չառած՝ կմեռնի»³²: Նույն ճակատագրին է արժանանում նաև երկրորդ ձմերուկից ելած աղջիկը: Թագավորի տղան շատ է տխրում և երրորդ ձմերուկը կտրում է մի պաղ աղբյուրի հասնելուն պես. «...Ձմերուկի միջից տյուս կթոնի աղջիկ մը, աղջիկ մի՛ ասե, խուրն-խրեղեն, լուսնկից, արեգակից պայծառ մի խրիշտակ, «ճոտ ւր, ճոտ ւր» կասի, ուր կթայի աղբրի ակն մեջ. կլվացվի, կսերսփվի, տյուս կելնի աղբրի միջից»³³: Հայկական հեքիաթի աղջկա այս անհրական գեղեցկությունը համադրվում է Գրիմ եղբայրների «Չյունանուշ»³⁴ հեքիաթի սկզբնամասերի հետ, որտեղ անգամակ թագուհին պատուհանի առաջ նստած կար անելիս հանկարծ ասեղով ծակում է մատն ու ձյան վրա ընկած երեք կաթիլ արյունն այնքան գեղեցիկ է լինում, որ թագուհին ակամա մտածում է. «Ա՛խ, երանի մի երեխա ունենայի՝ ձյան պես ճերմակ մաշկով, արյան պես կարմիր թշկներով ու շրջանակի պես սև մազերով»³⁵: Թագուհու վնասված մատից թափված արյունը նույնպես կարելի է դիտել իբրև զոհաբերության մասնակի դրսևորում:

Անհրական գեղեցկության վերոնշյալ պատկերացումն առկա է նաև Հենրի Գլեսիի իռլանդական հեքիաթների ժողովածուում տեղ գտած «Իռլանդիայի թագավորի որդին» հեքիաթում (ATU 513A, 507A), որտեղ սև հավին փոխարինում է ագռավը³⁶: Նույնն արտացոլված է նաև իռլանդացի Շեմուս Մակ Մանուսի «The Snow, the Crow and the Blood» («Չյունը, ագռավը և արյունը») հեքիաթում³⁷:

³¹ ՀԺՀ, հ. XIV, էջ 507:

³² Նույն տեղում:

³³ Նույն տեղում, էջ 508:

³⁴ Գրիմ եղբայրների. Հեքիաթներ (թարգմ.՝ Ա. Ղուկասյանի), Երևան, 1981, էջ 213–221:

³⁵ Նույն տեղում, էջ 213:

³⁶ H. Glassie. The King of Ireland's Son//Irish Folk Tales, New York, 1987, p. 39.

³⁷ S. Mac Manus. The Snow, the Crow and the Blood // Donegal Fairy Stories. Garden City, New York, Doubleday 1900, p. 153.

Ինչպես ակներև է «Իրեք հավկիթ» հեքիաթում պատավն անիծում է թագավորի որդուն. «Իրեք հավկիթի սեր մաշիս դու բալքիս»: Տղան ծերունու խորհրդով գտնում է հավկիթները, բայց դրանցից միայն մեկն է ճիշտ ջարդում՝ ջրի մոտ: Ձվից մի աղջիկ է դուրս գալիս, որի վրա տղան ջուր է ցողում և տանում իր երկիր: Մյուս երկու հավկիթը տղան ջարդում է ժամանակից շուտ՝ դեռ աղբյուրին չհասած, ինչի պատճառով էլ հավկիթներից դուրս եկած աղջիկները մահանում են:

Քննվող հեքիաթներում անիծող Պատավր համադրվում է Վարդավառի «Խնդումը»³⁸ հսկող Պատավի հետ, ով, «Խնդումը» գլխավերևում բռնած՝ հրապարակում պար է ածում և իբրև խնդության տոնի գլխավոր ու պահապան՝ ծիսական երգով իր մտավախությունն է հայտնում սեփական զգոնությունը կորցնելու և «Խնդումին» սպառնացող վտանգի շուրջ.

Խնդում օնիմ վաժրդաւ լի,
 Զրրդրփչեճ խնձուժր լի.
 Վախիմ թա քուժներս տանի,
 Խնդումըս եաղին տանի³⁹:

Երբ երիտասարդներից հնարամիտին հաջողվում է գավազանով խփել ու ցած գլորել «Խնդումին», բոլորն անմիջապես վրա են հասնում և խլիլում վրայի վարունգները, մրգերն ու ծաղիկները, իսկ ճարահատյալ Պատավն այն կործանողին անխնա անիծում է՝ «Բութերին եղունգ չմնա», «Երկու աչքով կուրանա», «Այնքան նվաղի, որ ասեղը իրեն նեցուկ դառնա», «Աստված ջանին քոր տա», «Գինդար»⁴⁰ սարի չափ վերքեր ունենա», «Դալար մեռնի» և այլն⁴¹:

Ժողովրդական խաղիկներում նույնպես «անեծքի տակ է» ծաղիկներին վնասող յուրաքանչյուր ոք.

Իմ ծաղիկը քաղած ա,
 Բարձր սարին կյաղած ա,
 Ծաղկիս յերան մին լիւս կյա,

³⁸ Մանր վարունգներով, խնձորներով ու վարդերով զարդարված մեկ մետրանոց խաչաձև փայտը՝ ծլած ցորենի ու գարու հետ կոչվում էր «Խնդում», իսկ ծեսը՝ «Խնդում տօք», ժողովրդական ստուգաբանությամբ՝ «ուրախություն տալ» (Հ. Խ ա ո ա տ յ ա ն - Ա ո ա ք է լ յ ա ն. Հայ ժողովրդական տոները, Երևան, 2005, էջ 210–211):

³⁹ Ե. Լ ա լ ա յ ե ա ն. Գողթն.– ԱՀ, XII գիրք, Թիֆլիս, 1905, էջ 151:

⁴⁰ Ագուլիսի մոտ մի սար է (նույն տեղում, էջ 151):

⁴¹ Նույն տեղում:

Դյուշմանին աչքը տիւս կյա⁴²:

(Տարբերակներ՝ Ով իմ ծաղկին ձեռք տա, Արենթաթախ տափին գա / Հերն-ախպերը թաղած ա / Հերն ու մերը թաղած ա / Դյուշմանին աշկը տյուս կյա և այլն)⁴³:

Եթե «Խնդում սօք» ծեսում Պառավն անհծում է երիտասարդին իր «Խնդումը» ավերելու համար, այս ժողովրդական հեքիաթներում՝ հոլով կամ քարով իր կուժը կամ փարչը կոտրելու համար: Երկու դեպքում էլ՝ Պառավին պատկանող կամ նրա հսկողության տակ գտնվող «Խնդումը» կամ կուժը (փարչը) պատուհասվում են: Կորստին հետևում են անեծքները, որոնք հեքիաթներում դրսևորվում են հետևյալ կերպ՝ «Ենգիչարու դարդով մեռնես», «Նուռի-Գյոզալի սերը սիրտդ ընկնի, վառիս ու էրիս», «Ըստուծանա կրխրնթրրիս, վրեր տու ծուլին ծառին տրրանաս», «Իրեք հավկթի սեր մաշիս դու բալքիս», «Գյուլիզար խանրմին հ'էշխլու էղնիս, յոթ տարի ուր էտնեն օլորտիս, նոր գտնաս», «Հալկթի միջուկը գտնես», «Դն թագավորի աղջկա սերը քո սրտում մնա», «Ոսկի ծամի սերը քո սրտին լինի»:

Պառավներն անհծում են շինծու ոգևորությամբ, և խորհրդանշական մակարդակում «Խնդում սօք» ծեսի Պառավի անեծքը համախոս է հեքիաթում անեծքի տրամաբանությանը, որը, ի վերջո, ծպտված բարեխոսություն է, որպեսզի հերոսը հասնի իր մուրազին: Պակաս ուշագրավ չէ «Սասնա ծռեր» հերոսավեպում արտատեր Պառավի անեծքը՝ ուղղված Սասունցի Դավթին, ով ավերել էր վերջինիս մշակած կորեկի արտը.

Ասաց.– Կրո՛ղ քեզի տաներ, Թրլոր Դավիթ.

Տու՛Օ վոչ պարով քու՛Օ մորեն ծնվեր.

Քու՛Օ խոր չունի՛ ավղուշի տեղ,

Որ Պառվի կուրկի մեջ ավղուշ կենիս:

Ասաց.– Պառավ, իմ խոր ավղուշի տեղ, վու՛Օր տե՛ղն ի:

Ասաց.– Քու՛Օ խոր ավղուշի տեղ Ծովասարն ի.

Վոր քու՛Օ խեր մեռիք ի, Մսրա Մելիք հիտ ի կտրի⁴⁴:

Վ. Բդոյանի կարծիքով՝ «Հեթանոսության ժամանակ Խնդումն արդեն այն էր, ինչ բերքի հովանավոր Ամանոր-Վանատուրը: Միայն քրիստոնեության հալածանքներով պիտի բացատրել, որ Վանատուրը ևս ծպտումի է ենթարկվել և լիովին անվանափոխվել: Խնդում բառը թերևս խնդության իմաստն է, որը կարող էր Վանատուր

⁴² Ժողովրդական խաղիկներ, խմբագրեց պրոֆ. դ-ր Մ. Աբեղյան, մասնակի աշխատակցությամբ Կոմիտասի, Երևան, 1940, էջ 155:

⁴³ Նույն տեղում:

⁴⁴ Սասնա ծռեր, հ. Ա, Երևան, 1936, էջ 261:

անվանը փոխարինել ամանօրյա զվարթագին տոնից»⁴⁵, ինչն էլ, կապվում է ամառային տոնակատարությունների շղթայում (Վարդավառ, Խաղողօրհներ) հասունացած հասկերի հավաքման, խաղողի ու խնձորի օրհնության և ճաշակման ծեսի, ինչպես նաև՝ Վարդավառին վառվող երկնաքեր դեզի շուրջը սիրած յարին որոնելու, նրա «թագայ նուբար գիրկն ու ծոցը» վայելելու բաղձալի ցանկության հետ: Ծիսական երգաշարում «սրտով սիրածը» համեմատվում է «բաղի թագա բարի»⁴⁶ հետ:

*Ջաղցի դրոներ բիրար էր,
Աղջիկ լաճուն նուբար էր*⁴⁷:

Կամ՝

*Բաղին մեջը դամիշ ա,
Ծոցրս լիգյր եմիշ ա,
Խաբար ըրեք իմ նանին,
Սրտավ սիրածն օրիշ ա*⁴⁸:

Շիրակի պարերգերից մեկում խոսվում է շուրջպարի համընդհանուր ուրախության («Էլի պարը բոլորավ, /Յարս մեջը մոլորավ»), նոր թխված հացի, մեջը դրված ձվածեղի, «Էրրվրնու նոան», ռեհանի և ջահել սրտերում բուն դրած թրթիռների շուրջ, որտեղ դարձյալ ակնարկվում է վերոնշյալ բարիքների նվիրաբերման մասին.

*Հաց առայ թագա-թագա,
Բոյր թամամ մին գագ ա,
Մէջն եմ դրել ձուածեղ,
Որ դնեմ եարիս մագա:
Մանրաթփիկ ըռէհան,
Էլնինք սարերը սէյրան*⁴⁹:

Կամ՝

*Ղուշը կանչից բաղումը,
Կանաչ խիյար թաղումը,
Ես մին փոնջ ռեհան բիդի,*

⁴⁵ Վ. Բ դ ո յ ա ն. Երկրագործական մշակույթը Հայաստանում, Երևան, 1972, էջ 499:

⁴⁶ Ժողովրդական խաղիկներ, էջ 258:

⁴⁷ Նույն տեղում, էջ 272:

⁴⁸ Թ. Հ ա յ ր ա պ է տ յ ա ն. Դաշտային բանահյուսական նյութեր [Թ. Հ.-ի անձնական արխիվ (այսուհետև՝ ԴԲՆ)], Արցախ, տետր - 2, 2006, թերթ 23:

⁴⁹ Մ. Ի ս ա հ ա կ ե ա ն. նշվ. աշխ., էջ 164:

*Քու փափաղիտ ծալումը*⁵⁰:

*Ի դեպ, քննվող հեքիաթներից երկուսում*⁵¹ *աղջիկը կերպարանափոխվում է ռեհանի, ինչն էլ համարվում է Խաչի ծաղիկը, որովհետև Խաչվերաց տունին խաչը զարդարող պեւ-պեւ հոտավետ ծաղիկների մեջ աչքի էր ընկնում, հատկապես, ռեհանը, որ Մարաշի բարբառով կոչվում էր «ըռահեռն ուրշնիլ», այսինքն՝ ռեհան օրհնել*⁵²:

*Նորապտղի պարսկերեն համանիշը՝ նուբարը, հայոց մեջ տարածված ծիսային երգաչարի ջրնաղ արտաքինով կույսն է կամ դեռատի կինը, «որը թե՛ իր անվան իմաստով և թե՛ նոր պտուղներ քաղելու, անհագորեն ծոցը լցնելու, պտղավորվելու, ջահել տղաներին դարդ ու խոց դառնալու իր գործառույթներով իսկապես նորաբեր պտուղներն անձնավորող դիցաբանական կերպար է, միանգամայն համախոս Ազաթանգեղոսի Ամանորին բնորոշող «ամենաբեր պտղոց նորոց բերելոց» տարընթերցվածային արտահայտությանը*⁵³:

*Հայ նուբար, նուբար, նուբար
Իմ բոյ, քու բոյ բարենբար.
Հայ նուբար, նուբար, նուբար,
Սարերու ծաղիկ նուբար*⁵⁴:

Իսկ Սուրմալուի «Ծաղկի գովքերից» մեկում ասվում է.

*Ծաղիկ ծաղկավանայ եմ,
Ասլ էրէվանայ եմ,
Տարին մե հետ ես գալըմ,
Թագայ նուբար խանայ եմ*⁵⁵:

Նոր տարվա ծիսական խորհրդի վերջնական արդյունքը դիցական գույզի սուրբ ամուսնությունն էր՝ աշխարհի ներդաշնակության, պտղավորման, աճի ու բարգավաճման նպատակային հետևանքներով, «հետևաբար Ամանոր արական աստվածությունը զուգակցվել է բուսականությունն ու նրա պտուղները խորհրդանշող դի-

⁵⁰ Թ. Հ ա յ ր ա պ ե տ յ ա ն. ԴԲՆ, Արցախ, տետր - 2, թերթ 41:

⁵¹ ՀԺՀ, հ. III, էջ 310-315, ՀԺՀ, հ. XI, էջ 323-331:

⁵² Հ. Խ ա ն ա տ յ ա ն - Ա ն ա ք ե լ յ ա ն. նշվ. աշխ., էջ 237:

⁵³ Մ. Հ ա ր ո լ թ յ ո լ յ ա ն. Հին հայոց հավատալիքները, կրոնը, պաշտամունքն ու դիցաբանը, Երևան, 2001, էջ 50:

⁵⁴ Մ. Ի ս ա հ ա կ ե ա ն. նշվ. աշխ., էջ 168:

⁵⁵ Ա. Ա հ ա ր ո ն ե ա ն. Սուրմալուի ժողովրդական երգեր. - ԱՀ, Բ գիրք, Թիֆլիս, 1897, էջ 337:

ցուհու հետ, միասին դարձել փեսա ու հարս, ճիշտ այնպես, ինչպես Արամազդ ու Անահիտ, Վահագն ու Աստղիկ դիցական զույգերը տարվա ծիսական արարողությունների տարբերակներում»⁵⁶:

Ամփոփելով հայ ժողովրդական բանահյուսության, մատենագրության և կրոնապատմական ավանդության մեջ պահպանված նորապտղի անձնավորման հիմքով ստեղծված դիպաշարերն ու հիշատակությունները՝ կարող ենք ասել, որ Նավասարդ ամսին կատարվող տոնը մինչև արեգակնային տոմարով Նոր տարվա օր դառնալն արդեն գոյություն ունեւ որպես Ամանոր-Վանատուր դիցազույգի բերքահավաքի տոն, որին առնչվող ծիսական սովորությունների փնջերը ներառվել են և՛ տարբեր տոներում և՛ վերապրուկների ձևով կենցաղավարում են ցայսօր:

АМАНОР И ВАНАТУР: «ПРАЗДНИК МОЛОДОГО ПЛОДА»

ТАМАР АЙРАПЕТЯН

Резюме

В армянской фольклорной, летописной и религиозно-исторической традиции сохранились сведения, касающиеся дохристианских божеств старого Нового года – Аманора и Ванатура, которые считались покровителями культа цветущей растительности и молодого плода. Празднества в их честь проводились в Новый год – Навасард. Различные символические цветы и плоды приносились в жертву покровителям молодой растительности. В мотивах армянской народной волшебной сказки сохранились следы данных языческих традиций армян.

AMANOR AND VANATOUR: “NEW CROP FEAST”

TAMAR HAYRAPETYAN

Summary

In Armenian folklore, chronological and religious-historical tradition trace evidences of Armenian pagan deities Amanor and Vanatour were preserved, who were believed to be the protectors of new yield and fruit, worshipped on Navasard (Armenian pagan New Year). Various symbolical fruits and flowers were sacrificed in their honor and this tradition. In motifs of Armenian Folk fairy tale details on worship of pagan deities Amanor and Vanatour have been preserved.

⁵⁶ *Ս. Հարությունյան. նշվ. աշխ, էջ 51–52:*